26.792

336
м-11

1939

05 JAN 2010

Խ. Ս. Հ. Մ. Ժ. Կ. Կ.

ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

336
Խ-11

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

№ 24 (ՍԽԵՄԱ Ա–14)
7-Ը ՄԱՐՏԻ 1939 Թ.

336
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1939 Թ.

1 1 .09. 2013

26 792

1492
40

ԽՍՀՄ ՖԺԿ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 24 (ՍԽԵՄԱ Ա—14)
7-Ը ՄԱՐՏԻ 1939 Թ.

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 1. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Պետական փոխառությունների պարտատոմսերն ի պահ են ընդունվում կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների, նույնպես և առաջին կարգի խնայողական դրամարկղների կողմից, վորոնք ունեն հուսալի անհրկեզելի պահարաններ:

Այդպիսի առաջին կարգի խնայողական դրամարկղների ցուցակն ամեն մի շրջանի (քաղաքի) համար սահմանում ե մարզային, յերկրային կամ հանրապետական Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Վարչությունը:

Անհրկեզելի պահարաններ չունեցող առաջին կարգի խնայողական դրամարկղները Գլխավոր Վարչության հատուկ թույլատվությամբ ի պահ պարտատոմսեր կարող են ընդունել կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղների նկուղներում պահելու համար:

2. Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները պետական փոխառությունների պարտատոմսերն ի պահ են ընդունում ինչպես առանձին քաղաքացիներից, նույնպես և հասարակական ու ընկերական կոոպերատիվ կազմակերպություններից (պրոֆմիություններից, փոխօգնության դրամարկղներից, կամավոր ընկերություններից, կոլտնտեսություններից, արտելներից և այլն):

Ուրիշ հիմնարկներից և կազմակերպություններից կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները պարտատոմսեր ի պահ չեն ընդունում:

Առաջին կարգի խնայողական դրամարկղները պարտատոմսերն ի պահ են ընդունում միայն առանձին քաղաքացիներից:

3. Պետական փոխառությունների պարտատոմսերն խնայողական դրամարկղների կողմից պահվում են մինչև նրանց տերերի կողմից հետ պահանջելը: Այն պարտատոմսերը, վորոնք մինչև համապատասխան փոխառության հետ գնելու ժամկետի լրանալը չեն պահանջվում իրենց տերերի կողմից, վոչնչացվում են խնայողական դրամարկղների կողմից

վորպես ուժը կորցրածի, դրա համար հատուկ սահմանված կարգով:

4. Պարտատոմսերը խնայողական դրամարկղների կողմից ի պահ են ընդունվում ինչպես անվանական, այնպես էլ ներկայչական:

Պարտատոմսերի ընդունումը ի պահ ըստ ներկայացնողի կատարում են միայն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղերն այն էլ միայն առանձին քաղաքացիներից. կազմակերպություններից պարտատոմսերն ընդունվում են միայն անվանական պահպանման համար:

Յուրաքանչյուր քաղաքացի կարող է պարտատոմսերը խնայողական դրամարկղին ի պահ տալ ինչպես իրեն անվամբ, նույնպես և ուրիշ անձնավորության անունով:

Ի պահ ընդունված պարտատոմսերի կարգադրողը կարող է լինել միայն մեկ անձնավորություն, չի թույլատրվում պարտատոմսերն ի պահ ընդունել յերկու կամ մի քանի անձնավորության անունով:

Այն անձնավորությունը, վորն ուրիշի անունով է պահ տալիս պարտատոմսերը, իրավունք չունի կարգադրություն անել այդ պարտատոմսերի նկատմամբ:

5. Պարտատոմսերն ի պահ ընդունելիս խնայողական դրամարկղը պարտատոմսատիրոջը պարտավոր է տալ № 86 ձևի պահպանման վկայական (հավելված № 2): Պահպանման վկայականը պետք է ստորագրվի խնայողական դրամարկղի վերահսկիչի ու գանձապահի կողմից և պետք է ունենա խնայողական դրամարկղի դրոշմային կնիքը: Պահպանման վկայականի պատճեն (ձև № 86-ա), վորը հանդիսանում է պարտատոմսատիրոջ անձնական հաշիվը՝ պահվում է խնայողական դրամարկղում:

6. Խնայողական դրամարկղները պետական փոխառությունների պարտատոմս պահողների առաջ, նրանցից ի պահ ընդունած պարտատոմսերի ամբողջության և անվտանգության համար պատասխանատվություն են կրում:

7. Անվանապես ի պահ ընդունած պարտատոմսերը խնայողական դրամարկղները ստուգում են պարտատոմսերի պահպանման ամբողջ ժամանակաշրջանում շահումների խաղարկությունների և մարման խաղարկությունների աղյուսակներով: Պարտատոմսերի վրա շահում ընկնելիս կամ նրանք մարման խաղարկություններով դուրս գալիս խնայողական դրամարկղն այդ մասին հայտնում է պարտատոմսատիրոջը հասարակ բաց նամակով նրա կողմից ցույց տրված հասցեյով:

Խնայողական դրամարկղը պարտատոմսատիրոջ առաջ պատասխանատվություն չի կրում այն դեպքում, յերբ փոստի կողմից նրան չի հանձնվում շահումի կամ պարտատոմսերի մարման խաղարկություններով դուրս գալու մասին ծանուցագիրը, ինչպես և այն դեպքում, յերբ պարտատոմսատերը բաց է թողնում շահումը կամ պարտատոմսի արժեքը ստանալու ժամկետը:

Խնայողական դրամարկղը ի պահ ընդունած պարտատոմսերի կտրոնների ժամկետների հասնելու մասին վոչ մի ծանուցագիր չի ուղարկում:

Շահած կամ մարման խաղարկություններով դուրս յեկած պարտատոմսերով, ինչպես և կտրոններով հասանելիք գումարները խնայողական դրամարկղները պարտատոմսատերերին վճարում են նրանց խնայողական դրամարկղը ներկայանալիս: Ամեն անգամ պարտատոմսատիրոջ առանձին գրավոր կարգադրության հիման վրա խնայողական դրամարկղը փոխանցում է նրա դրամական հաշիվը (ավանդ) շահումներն ու մարման խաղարկություններով դուրս յեկած պարտատոմսերի արժեքը, ինչպես և այն կտրոնների արժեքը, վորոնց վճարման ժամկետը հասել



է՝ յեթե պարտատոմսատերերը տվյալ խնայողական դրամարկղում ունեն դրամական հաշիվ (ավանդ):

Ճիշտ այդպես էլ խնայողական դրամարկղը, պարտատոմսատիրոջ գրավոր համաձայնությամբ, փոխադրում է այդ գումարները նրա հասցեյով կամ թե նրա դրամական հաշվին մեկ ուրիշ խնայողական դրամարկղում հաշվեգրելու համար: Դրամի փոխադրումը կատարվում է այն կարգով ու պայմաններով, վորոնք սահմանված են փոխադրական գործառնությունների համար:

Ներկայչական ի պահ ընդունված պարտատոմսերը խնայողական դրամարկղները շահումների և մարման խաղարկությունների աղյուսակներով չեն ստուգում:

8. Խնայողական դրամարկղների աշխատակիցները, ինչպես և այն անձինք, վորոնք ստուգում կամ հետազոտում են խնայողական դրամարկղները, պարտավոր են խստորեն պահպանել քաղաքացիների պարտատոմսերը խնայողական դրամարկղներում պահ տալու գաղտնիքը: Խնայողական դրամարկղների կողմից ի պահ ընդունած պարտատոմսերի մասին տեղեկություններ հրապարակող մեղավոր անձինք քրեական պատասխանատվության են կանչվում:

9. Խնայողական դրամարկղները քաղաքացիներից ի պահ ընդունած պարտատոմսերի մասին տեղեկանքներ են տալիս միայն իրեն՝ պարտատոմսատիրոջը, կամ թե նրա խնամակալին կամ խնամատարին, նույնպես և նրա հավատարմատարին, վորը լիազորված է պարտատոմսերի մասին կարգադրություններ անելու կամ թե տեղեկանքներ ստանալու նրանց մասին:

Ուրիշ վոչ մի անձանց կամ կազմակերպությունների, այդ թվում նաև ֆինանսական մարմիններին, նույնպես և դատական մարմիններին նրանց մոտ վարույթում գտնվող քաղաքացիական գործերով, խնայողական դրամարկղները քաղաքացիներից ի պահ ընդունած պարտատոմսերի մասին տեղեկանքներ տալու իրավունք չունեն:

Խնայողական դրամարկղները քրեական գործով ի պահ ընդունած պարտատոմսերի մասին տեղեկանքներ են տալիս միայն դատական և հետաքննչական մարմիններին՝ դատարաններին, դատախազներին, քննիչներին ու ՆԳԺԿ-ի մարմինների (միլիցիա, քրեական հետախուզություն, պետական անվտանգության վարչություն) գրավոր պահանջների հիման վրա: Այդպիսի տեղեկանքներ տալու մասին գրավոր պահանջի մեջ պետք է նշվի, վոր այդ պահանջը առաջադրվում է քրեական գործերի առնչությամբ:

10. Խնայողական դրամարկղների կողմից քաղաքացիներից ի պահ ընդունած պարտատոմսերի վրա կալանք կարող է դրվել կամ բռնագանձում կատարվել միայն քրեական գործերով:

Պարտատոմսերի վրա կալանք կարող է դրվել դատական և հետաքննչական մարմինների դատարանների, դատախազների, քննիչների ու ՆԳԺԿ-ի մարմինների (միլիցիայի, քրեական հետախուզության, պետական անվտանգության վարչության) գրավոր պահանջներով՝ նրանց մոտ յեղած քրեական գործերով:

Խնայողական դրամարկղում պահվող քաղաքացիներին պատկանող պարտատոմսերի վրա բռնագանձում կարող է գործադրվել միայն որինական ուժի մեջ մտած դատարանի դատավճռով, վորը հանված է քրեական գործով, կամ կատարողական թերթի հիման վրա տրված դատական վորոշման համաձայն՝ քրեական գործով ծագած հայցի հիման վրա:

Ծանոթություն.— Պարտատոմսի վրա կալանք դնելու կամ նրանց տալու արգելման մասին այդ պարտատոմս պահողի անձ-

նական հաշվում կարմիր թանաքով նշում է արվում, որը հաստատվում է խնայողական դրամարկղի վարիչի և վերահսկիչի ստորագրություններով:

11. Կազմակերպություններից ի պահ ընդունած պարտատոմսերի մասին տեղեկանքներ խնայողական դրամարկղները տալիս են իրենց՝ կազմակերպություններին, որոնց պատկանում են պարտատոմսերը, նույնպես և խորհրդային վերահսկողության մարմինների, դատական մարմինների (ինչպես քրեական, նույնպես և քաղաքացիական գործերով), հետաքննչական մարմինների, ֆինանսական մարմինների և այն սիստեմի վերադաս հիմնարկների հարցումներով, որի մեջ մտնում է տվյալ կազմակերպությունը:

12. Պարտատոմսատերը, որի անունով պարտատոմսերը խնայողական դրամարկղի կողմից ի պահ են ընդունվել, իրավասու յե իրեն պարտատոմսերը կտակել ցանկացած անձին, կամ մի քանի անձանց (անկախ նրանից, հանդիսանում են արդյոք նրանք նրա ժառանգները), ինչպես և պետական ու հասարակական կազմակերպության կամ մի քանի կազմակերպությունների:

Կտակային կարգադրությունը չի զրկում պարտատոմսատիրոջը կենդանության ժամանակ պարտատոմսերի վրա կարգադրություն անելու իրավունքից:

Կտակային կարգադրության մեջ պարտատոմսատերը պետք է ցույց տա՝

ա) այն անձանց անունը, հայրանունն ու ազգանունը (կամ կազմակերպության անունը), որոնց կտակում է պարտատոմսերը.

բ) կարգադրությունը կազմելու ժամանակը.

գ) յեթե պարտատոմսերը կտակվել են մի քանի անձանց (կամ կազմակերպությունների) — ինչ գումարով և ինչ համարներով պարտատոմսեր պետք է տրվեն նրանց յուրաքանչյուրին:

Կտակային կարգադրություններում ուղղումներ և հավելումներ չեն թույլատրվում:

Յեթե պարտատոմսերը կտակվել են մի քանի անձանց առանց ցույց տալու նրանցից յուրաքանչյուրին հասանելիք գումարը, ապա այդ պարտատոմսերը, ինչպես և նրանց վրա ընկած շահումները պահատվությունից հավասար մասերով տրվում են կտակում նշված բոլոր անձանց: Ներկայչական ի պահ տրված պարտատոմսերի նկատմամբ կտակային կարգադրություններ խնայողական դրամարկղների կողմից չեն ընդունվում:

13. Կտակային կարգադրությունը պարտատոմսատերը գրանցում է խնայողական դրամարկղում պահվող ձեվ № 86-ա անձնական հաշվի քարտում: Պարտատոմս պահողի կտակային կարգադրության տակ արված ստորագրությունը հաստատվում է խնայողական դրամարկղի վերահսկիչի կողմից:

Պարտատոմսատերը կարող է նաև կտակային կարգադրություն անել առանձին հայտարարությամբ, ուղղված խնայողական դրամարկղին: Այդ դեպքում պարտատոմսատիրոջ ստորագրությունը պետք է հաստատվի հետևյալ կազմակերպություններից մեկի պատասխանատու անձի ստորագրությամբ և կնիքով, նոտարական մարմինների (նոտարական գրասենյակում կամ ժողդատարանին կից նոտարական սեղան), գյուղխորհրդի ըստ պարտատոմսատիրոջ բնակավայրի, հիմնարկության, ձեռնարկության, կազմակերպության կամ զորամասի — ըստ պարտատոմսատիրոջ աշխատանքի վայրի կամ ծառայության:

Պարտատոմսատիրոջ հայտարարությունները կտակային կարգադրությունների հետ պետք է պահվեն խնայողական դրամարկղում առանձին թղթապանակում (այդ թղթապանակը պահվում է նկուղում կամ անհրկիզելի պահարանում): Ձեվ № 86-ա անձնական հաշվի քարտում ցույց է տրվում (վերահսկիչի ստորագրությամբ) կտակային կարգադրության բովանդակությունը և նշում է արվում առանձին հայտարարության գոյության մասին, որը պահվում է կտակային կարգադրությունների թղթապանակում:

14. Խնայողական դրամարկղներում պահվող պարտատոմսերի տերը ցանկացած ժամանակ կարող է փոփոխել կամ վերացնել իր կտակային կարգադրությունը, այդ մասին գրավոր դիմելով խնայողական դրամարկղին:

Կտակային կարգադրությունը վերացնելու կամ փոփոխելու հայտարարության վրայի ստորագրությունը պետք է վավերացվի խնայողական դրամարկղի վերահսկիչի կողմից (պարտատոմսատիրոջ անձամբ ներկայանալու ժամանակ) կամ այն կարգով, որով վավերացվում են կտակային կարգադրությունների վրայի ստորագրությունները (հոդ. 13):

Կտակային կարգադրությունների վերացման կամ փոփոխման մասին տրված հայտարարությունների համաձայն, խնայողական դրամարկղներում պահվող համապատասխան անձնական հաշիվների քարտերում, ինչպես և կտակային կարգադրությունների մասին տրված սկզբնական հայտարարությունների վրա նշում է արվում (վերահսկիչի ստորագրությամբ) կտակային կարգադրության վերացման կամ փոփոխման մասին:

Կտակային կարգադրությունը վերացնելու կամ փոփոխելու հայտարարությունները պահվում են խնայողական դրամարկղում կտակային կարգադրությունների թղթապանակներում:

15. Պարտատոմսատիրոջ մահից հետո, խնայողական դրամարկղում պահված պարտատոմսերը տրվում են կտակային կարգադրության մեջ նշված անձանց, նրանց կողմից պահպանման վկայականը, զագսի մարմիններից պարտատոմսատիրոջ մահվան մասին տեղեկանք ներկայացնելուց հետո, ինչպես և փաստաթղթեր, որոնք հաստատում են նրանց անձնավորությունները (անցագիր կամ անցագիրը փոխարինող փաստաթուղթ):

Զագսի մարմիններից տրված տեղեկանքը մնում է խնայողական դրամարկղում և կցվում է այն փաստաթղթերին, որոնցով պարտատոմսերը տրված են:

16. Կտակային կարգադրությունը բացակայելիս խնայողական դրամարկղում պահված պարտատոմսերը, նրանց տիրոջ մահվան դեպքում, տրվում են նրա ժառանգներին, նոտարական մարմիններից ժառանգական իրավունքի մասին վկայագիրը, պահպանման վկայականը և ստացողի անձնավորությունը հաստատող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: Նոտարական մարմնի վկայագիրը (իսկականը կամ վավերացված պատճեն) մնում է խնայողական դրամարկղում և կցվում է այն փաստաթղթերին, որոնցով պարտատոմսերը տրված են: Յեթե օրինական ժառանգները խնայդրամարկղ են ներկայացրել կտակային կարգադրություն չթողնող պարտատոմսատիրոջ մահվան օրից մինչև 6 ամիս անցնելը, ապա պարտատոմսերը, ոչ ավել 300 ռուբլու գումարով, տրվում են նրանց առանց նոտարական մարմիններից ժառանգական իրավունքի մասին վկայագիր ներկայացնելու: Այդ դեպքում խնայողական դրամարկղը պահատվությունից ոչ ավել 300 ռ. գումարով պարտատոմսեր է տալիս ժառանգներին, նրանց կողմից պահպանման վկայականը, պարտատոմսատիրոջ մահվան մասին զագսի մարմնի տեղե-

կանքը և ստացողների ազգակցական կապերը պարտատոմսատիրոջ հետ հաստատող փաստաթղթերը (տնագրքից քաղվածքը, ծննդյան վկայականը, անձնագիրը, մետրիկայի, գյուղխորհրդի տեղեկանքը), ինչպես և փաստաթղթեր, որոնք հաստատում են պարտատոմսերը ստացողի անձնավորությունը ներկայացնելուց հետո:

Զագսի մարմնի տեղեկանքը՝ պարտատոմսատիրոջ մահվան մասին, և ժառանգների ազգակցական կապերը մահացած պարտատոմսատիրոջ հետ հաստատող փաստաթղթերը մնում են խնայողական դրամարկղում և կցվում են այն փաստաթղթերին, որոնցով պարտատոմսերը տրված են:

Պարտատոմսերը ստանալիս ժառանգները խնայողական դրամարկղին պետք է գրավոր պարտավորագիր տան այն մասին, որ ուրիշ ժառանգներ հայտնվելիս, նրանք ստացած պարտատոմսերից նրանց կտան հասանելիք գումարը:

17. Եթե այն անձնավորությունը, որին ժառանգության կամ կտակային կարգադրության գծով անցնում են խնայողական դրամարկղում պահված պարտատոմսերը, չի կարող ներկայացնել պահպանման վկայականը, ապա պարտատոմսերը այդ անձնավորությանը տրվում են նրա գրավոր հայտարարությամբ, որի մեջ նա ցույց է տալիս այն պատճառները, որոնց հետևանքով նա չի կարող ներկայացնել պահպանման վկայականը:

18. Խնայողական դրամարկղները պահվող պարտատոմսերի մասին, որոնց տերերը մեռել են, տեղեկանքներ են տալիս նոտարական մարմիններին, նրանց գրավոր հարցումներով: Այդ հարցումներում պետք է ցույց տրվի, որ տեղեկանքը պահանջվում է պարտատոմսատիրոջ մահանալու կապակցությամբ: Նոտարական մարմնին տրված տեղեկանքում ցույց չի տրվում այն անձնավորության ազգանունը, որին կտակվել են պարտատոմսերը:

19. Եթե մահացած պարտատոմսատերը ժառանգներ չունի և կտակային կարգադրություն չի թողել, ապա խնայողական դրամարկղում պահվող նրա պարտատոմսերը համարվում են անժառանգ և յենթակա յեն պետֆոնդերի վերածմանը: Այդ պարտատոմսերի արժեքը, պահելով խնայողական դրամարկղին հասանելիք գումարը, փոխանցվում է պետբանկին, համապատասխան բյուջեյի յեկամուտին տալու համար (տեղական ֆինմարմնի ցուցմունքով, որը հիմնըված պետք է լինի նոտարական մարմնի վկայագրի վրա՝ ի պահ դըրված պարտատոմսերի անժառանգ լինելու մասին):

20. Խնայողական դրամարկղներում պարտատոմսերը պահելու համար վճար վերցվում՝ ամեն մի պարտատոմսի համար ամսական մեկ կոպեկի չափով (յուրաքանչյուր թերթից), անկախ նրա արժողությունից:

Վճարը տարվա համար գանձվում է առաջուց՝ պարտատոմսերը ի պահ ընդունելիս: Հետագայում լրացուցիչ վճարը գանձվում է պարտատոմսերը պահելու յուրաքանչյուր հաջորդ ամսվա համար պարտատոմսատիրոջ խնայողական դրամարկղը ներկայանալիս: Ընդվորում պահատվության վոչ լրիվ ամիսը հաշվում է վորպես լրիվ ամիս:

Եթե պարտատոմսատերը պարտատոմսերը ստանում է պահ տալու օրվանից մինչև մեկ տարի լրանալը, ապա գանձված վճարը հետ չի վերադարձվում:

Ծանոթություն.— Խնայողական դրամարկղների կողմից ընդունված պարտատոմսերը պահելու համար հոդ. 20-ով սահմանված վճարը մինչև ներկա հրահանգի ուժի մեջ մտնելը գանձվում է պարտատոմսատիրոջից այն ժամկետը անցնելու օրից,



մինչև վորը գանձված է յեղել վճարը նախորդ չափով:

21. Անվանական պահպանման վկայականը կորցնելու դեպքում պարտատոմսատիրոջը, նրա գրավոր հայտարարության համաձայն խնայողական դրամարկղը տալիս է նոր պահպանման վկայական:

Նոր պահպանման վկայական տալու համար գանձվում է մեկ ռուբլի:

Ներկայչական պահպանման վկայականները կորցնելու մասին խնայողական դրամարկղները հայտարարություններ չեն ընդունում:

Կորցրած ներկայչական պահպանման վկայականների վերաբերյալ իրավունքները կարող են վերականգնել միայն այդ մասին դատարանի վորոշմամբ՝ կորցրած ներկայչական փաստաթղթերով իրավունքները վերականգնելու մասին յեղած գործերի հատուկ դատավարության կարգով (вызывное производство) համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1929 թ. հունիսի 14-ի «Ի պահ տրվող ավանդների և արժեթղթերի դրավի համար վարկային հիմնարկությունների կողմից տրվող կորցրած ներկայչական անդորրագրերով իրավունքները վերականգնելու մասին» վորոշման (հավելված № 1): Այդ դեպքում պարտատոմսերը կամ նոր պահպանման վկայականը տրվում են ներկայչական պահպանման վկայականը կորցնելու մասին դատարանին տրված դիմումը հայտարարելու օրից մեկ տարվա ժամկետը լրանալուց և խնայողական դրամարկղին դատարանի համապատասխան վորոշումը ներկայացնելուց հետո:

Այն պահպանման վկայականներով, վորոնք կորած են յեղել և վորոնց փոխարեն տրվել են նոր վկայականներ, խնայողական դրամարկղները վոչ մի գործառնություն չեն կատարում, իսկ այդպիսի վկայականներ խնայողական դրամարկղ ներկայացնելու դեպքում նրանք վերցվում են ներկայացնողից և մարվում են:

22. Պարտատոմսատիրոջ ցանկությամբ նրա անվանական պահպանման վկայականը կարելի յե հանձնել մի այլ անձնավորության: Հանձնումը ձևակերպվում է խնայողական դրամարկղի կողմից պարտատոմսատիրոջ գրավոր հայտարարության համաձայն, վորին կցվում է պահպանման վկայականը:

Եթե խնայողական դրամարկղում պահվող պարտատոմսերը նոր տիրոջ են անցնում վոչ նրանց նախորդ տիրոջ համաձայնությամբ, այլ ուրիշ հիմունքներով (ըստ ժառանգության, դատարանով և այլն), ապա հանձնումը ձևակերպվում է նոր պարտատոմսատիրոջ գրավոր հայտարարության հիման վրա, վորին կցվում է տեղի ունեցող անցումի ապացույցները:

Հանձնումը խնայողական դրամարկղի կողմից ձևակերպվում է վորպես պահատվությունից բոլոր պարտատոմսերի հետ տալը նրանց նախորդ տիրոջը, և վորպես պարտատոմսերի պահ ընդունում նոր տիրոջից:

23. Խնայողական դրամարկղում պահ դրված պարտատոմսերը գրավ դնելու և փոխատվություն ստանալու ցանկության դեպքում, պարտատոմսերը նրանց տիրոջ պահպանջով վերադարձվում են, իսկ փոխատվությունը տրվում է դրա համար սահմանված ընդհանուր կարգով:

## 2. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

24. Պարտատոմսերն ի պահ ընդունելիս խնայողական դրամարկղի վերահսկիչը պարտավոր է՝

ա) պարտատոմսատիրոջ ներկայությամբ ստուգել ընդունած պարտատոմսերի գումարն ու նրանց վճարունակությունը և հաշվել տարվա ընթացքում պարտատոմսերի պահպան-

ման համար հատանելիք վճարը, վորից հետո պատճենահան թղթով լրացնել ձև № 86 պահպանման վկայականը (հավելված № 2), ձև № 86—ա անձնական հաշիվը (հավելված № 3) և անձնական հաշվի վերգիրը— ձև № 86—բ (հավելված № 4), թույլ չտալով այդ փաստաթղթերում վորևէ մի ուղղումներ,

բ) ստանալ անձնական հաշվի քարտում պարտատոմսատիրոջ ստորագրության նմուշը և ըստ նրա ցանկության— կոնտակային կարգադրությունը,

գ) դուրս գրել ձև № 57 օրդերը (հավելված № 6) ի պահ ընդունած պարտատոմսերի անվանական արժեքով և պահպանման համար գանձվող վճարի համար, օրդերի վրա վերցնել պարտատոմսատիրոջ ստորագրությունը պահպանման վկայականը ստանալու մասին,

դ) գործառնությունը գրանցել ձև № 24 գործառնական օրագրում,

ե) պարտատոմսատիրոջը տալ համարային տալոն, նրա համարը դնելով ձև № 57 օրդերի վրա և ձև № 86 պահպանման վկայականը ձև № 86—բ վերգրի հետ միասին, նաև ձև № 57 օրդերն ու պարտատոմսերը հանձնել գանձապահին:

25. Գանձապահը ստանալով վերահսկիչից պարտատոմսերը, ձև № 57 օրդերն ու պահպանման վկայականը վերգրի հետ միասին, պարտավոր է՝

ա) ստուգել պարտատոմսերի վճարունակությունը և համեմատել նրանց ընդհանուր գումարն այն գումարի հետ, վորը ցույց է տրված օրդերում, պահպանման վկայականում և վերգրի մեջ,

բ) համեմատել պարտատոմսերի համարներն ու սերիաները պահպանման վկայականի և վերգրի գրանցումների հետ,

գ) հավաստիանալ պարտատոմսերին կից կտրոնների, վորոնց ժամկետը նշված է պահպանման վկայականում և վերգրի մեջ, նաև հետագա բոլոր կտրոնների առակայության մեջ,

դ) ստանալ ձև № 57 օրդերի համաձայն պարտատոմսերի պահպանման վճարը,

ե) ստորագրել պահպանման վկայականը, վերգիրն ու օրդերը, և տալ պահպանման վկայականը պարտատոմսատիրոջը, ստանալով նրանից համարային տալոնը,

զ) պարտատոմսերը վերգրի հետ միասին տեղավորել ծրարում, նրա վրա նշելով պահպանման վկայականի համարը, պարտատոմսատիրոջ ազգանունը, փոխառության անվանումն ու բաժինը և պարտատոմսերի անվանական արժեքը (տես մակագրության նմուշը ծրարի վրա— հավելված № 7):

26) Յեթե ի պահ ընդունված պարտատոմսերի լրիվ ցանկը չի տեղավորվում պահպանման վկայականում, անձնական հաշվում և ձև № 86—բ վերգրի մեջ, ապա վերահսկիչը պարտատոմսերի համար կազմում է առանձին ձև № 87 վերգիրը (հավելված № 5) յերեք օրինակից (պատճենահան թղթի տակ): Այդ վերգրի առաջին օրինակը կցվում է պահպանման վկայականին և վավերացվում է վերահսկիչի ու գանձապահի ստորագրություններով, նաև հաստատվում է խնայողական դրամարկղի կնիքով. յերկրորդ օրինակը կցվում է ձև № 86—ա անձնական հաշվին և հաստատվում է վերահսկիչի ու պարտատոմսատիրոջ ստորագրություններով, իսկ յերրորդ օրինակը՝ ստորագրված վերահսկիչի ու գանձապահի կողմից պարտատոմսերի ու ձև 86—բ բլանկի հետ դրվում է ծրարի մեջ:

Պահպանման վկայականի վրա, անձնական հաշվում ու ձև № 86—բ վերգրի մեջ, վերահսկիչը նշում է անում՝ «ընդունված է համաձայն կցվող առանձին վերգրի»:

27. Յեթե պարտատոմս պահողն անգրագետ է, վերահսկիչը ստորագրության նմուշի փոխարեն անձնական հաշվի քարտում ցույց է տալիս «անգրագետ» և նշում է անցագրի կամ անցագիրը փոխարինող փաստաթղթի դատան, համարը և տալու վայրը, վորը ներկայացնում է պարտատոմսատերը: Այդ գրանցումը վերահսկիչը վավերացնում է իր ստորագրությամբ: Պարտատոմսատերը պետք է զգուշացվի անցագիրը (կամ անցագիրը փոխարինող փաստաթուղթ) ներկայացնելու անհրաժեշտության մասին՝ պահատվությունից պարտատոմսերն հետ ստանալիս:

28. Յեթե միևնույն անձնավորության կողմից խնայողական դրամարկղում ի պահ են հանձնվում տարբեր փոխառությունների պարտատոմսեր, ապա խնայողական դրամարկղը առանձին պահպանման վկայական է տալիս բոլոր այն փոխառությունների ընդունման մասին, վորոնք թողարկվել են կոլեկտիվ բաժանորդագրության կարգով և առանձին վկայական 1938 թ. ներքին շահող փոխառության պարտատոմսերի համար:

Յեթե խնայողական դրամարկղում պահվող պարտատոմսերի տերը հետագայում լրացուցիչ պարտատոմսեր է ի պահ հանձնում, ապա նրան կրկին հանձնվող պարտատոմսերի ընդունման համար նոր պահպանման վկայական է տրվում:

29. Պահպանման համար վոչ իրեն՝ պարտատոմսատիրոջից, այլ մեկ ուրիշ անձնավորության միջոցով պարտատոմսերն ընդունելիս, խնայողական դրամարկղի վերահսկիչը պահպանման վկայականը, անձնական հաշիվը, օրդերն ու վերգիրը դուրս է գրում պարտատոմսատիրոջ անունով, պարտատոմսերը հանձնող անձնավորությունից անձնական հաշվում վերցվում է ստորագրություն, (ստորագրության նմուշի համար հատկացված տեղում, վերևում) պահպանման վկայականն ստանալու մասին:

Հետագայում, իրեն պարտատոմսատիրոջ առաջին անգամ ներկայանալու ժամանակ, նրանից անձնական հաշվում ստորագրություն է վերցվում, վորը հանդիսանում է վորպես ստորագրության նմուշ և պահպանման վկայականը նրա կողմից ստանալը հաստատող փաստաթուղթ՝ միաժամանակ նշելով անձնական հաշվում պարտատոմսատիրոջ կողմից ներկայացվող անցագրի համարը և տալու վայրը:

Միաժամանակ վերահսկիչը, ձև № 57 օրդերի բլանկի վրա վերցնում է պարտատոմսատիրոջ ստորագրության նմուշը և օրդերում նշում է պահպանման վկայականի դատան ու համարը: Այդ օրեդերները (ստորագրության նմուշները) հանձնվում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությանը պարտատոմսերը ի պահ ընդունելու ժամանակ կազմված ձև № 57 օրդերին կցելու համար:

30. Պարտատոմսերը վոչ անվանապես, այլ ըստ ներկայացնողի ի պահ ընդունելիս պարտատոմսատիրոջ ազգանունը պահպանման վկայականում, անձնական հաշվում և ձև № 86—բ վերգրում ցույց չի տրվում: Ճիշտ նույնպես անձնական հաշվում չի նշվում պարտատոմսատիրոջ հասցեն, չի վերցվում նրա ստորագրության նմուշը և պարտատոմսատիրոջից չի ընդունվում կոնտակային կարգադրություն: Ձև № 57 օրդերում պարտատոմսատիրոջ ազգանունը չի նշվում և ստորագրություն պահպանման վկայականը ստանալու մասին չի վերցվում:

31. Գանձապահը գործառնական օրը վերջանալուց հետո, ի պահ ընդունած պարտատոմսերի ձև № 57 օրդերը հաշվելուց և ձև № 12 նկուղային գրքում գրանցելուց հետո, այդ օրդերները վերադարձնում է վերահսկիչին:

Որվա ընթացքում ի պահ ընդունված պարտատոմսերի ընդհանուր

գումարը վերահսկիչը, համաձայն ձև № 57 օրդերների, գրանցում է գործառնական օրագրի ձև № 25—ա կցորդի այն սյունյակներում, վորոնք նախատեսված են ի պահ ընդունած պարտատոմսերի հաշվառման համար «այլ մուտք» տողում (մեկ սյունյակը կոլեկտիվ բաժանորդագրության կարգով իրացվող փոխառությունները հաշվի առնելու համար, իսկ մյուս սյունյակը՝ 1938 թ. շահող փոխառության պարտատոմսերի համար):

Բացի այդ, պարտատոմսերն ի պահ ընդունելու գործառնությունները վերահսկիչի կողմից հաշվի յեն առնվում ձև № 25—ա կցորդի 5-րդ և 6-րդ հատվածներում:

32. Ի պահ ընդունած պարտատոմսերի անձնական հաշիվները վերահսկիչը պահում է աճող համարների կարգով փակ քարտակալում, վորի բանալիները պետք է գտնվեն վերահսկիչի մոտ: Այդ քարտակալի հետ առնչություն ունենալու իրավունքը ոչ այլ աշխատակիցներին՝ քարտակալից անձնական հաշիվների հանելը և ուրիշ աշխատակիցներին տալը, թույլատրվում է միայն դրա համար նախատեսված դեպքերում (որինակ ստուգումների ժամանակ) և անպայմանորեն վերահսկիչի ներկայությամբ և հսկողության տակ, վորը պատասխանատվություն է կրում այդ քարտակալի համար:

33. Ի պահ ընդունած պարտատոմսերը ծրարներով պահվում են խնայողական դրամարկղի նկուղում՝ գանձապահի պատասխանատվությամբ (նկուղը վարիչի) նույն կարգով, ինչպես անձնական հաշիվները քարտակալներում:

Այն խնայողական դրամարկղներում, վորոնք առանձին նկուղ չունեն, ծրարները պարտատոմսերով պահվում են անհրկիզելի արկղներում:

## 3. ՊԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ՏԱԼԸ

34. Ի պահ ընդունված պարտատոմսերը տրվում են լրիվ կամ մասմաս պահպանման վկայականը ներկայացնելուն պես նրանց տիրոջը կամ այն անձնավորությանը, վորն ունի պարտատոմսատիրոջից հավատարմագիր:

Հավատարմագիրը կարող է տրվել վոչ ավել 3 տարի ժամկետով: Յեթե հավատարմագրի գործադրության ժամկետը ցույց չի տրված, ապա նա ուժի մեջ է համարվում նրա տալու որվանից մինչև մեկ տարի:

Պարտատոմսատիրոջ ստորագրությունը հավատարմագրի վրա հաստատվում է հետևյալ կազմակերպություններից վորևէ մեկի կողմից՝ նոտարական գրասենյակի, ժողդատարանին կից նոտարական սեղանի, քաղխորհրդի, շրջգործկոմի, կամ գյուղխորհրդի կողմից ըստ պարտատոմսատիրոջ բնակության վայրի, հիմնարկության, ձեռնարկության կամ զինվորական մասի կողմից—ըստ նրա աշխատանքի կամ ծառայության վայրի, այն տնային վարչության կողմից, վորտեղ պարտատոմսերը գրանցված է: Բուժիչ հիմնարկություններում բուժվող անձանց կողմից տրված հավատարմագրերը պետք է հաստատվեն այդ հիմնարկության վարչության ստորագրություններով և կնիքով:

35. Պահատվությունից պարտատոմսերը տալիս վերահսկիչը պարտավոր է՝

ա) համեմատել պահպանման վկայականի գրանցումները անձնական հաշվի գրանցումների հետ.

բ) հաշվել պարտատոմսերի համար հասանելիք վճարը և կազմել ձև № 58 օրդերը՝ (հավելված № 9) տրվող պարտատոմսերի գումարով, նշելով օրդերում պարտատոմսերը պահելու համար գանձվող վճարի գումարը,

գ) ձև № 58 օրդերում վերցնել պարտատոմսատիրոջ ստորագրությունը պարտատոմսերը ստանալու մասին և համեմատել օրդերի վրայի այդ ստորագրությունը անձնական հաշվում յեղած ստորագրության նմուշի հետ,

դ) գրանցել գործառնությունը պահպանման վկայականում, անձնական հաշվում և ձև № 24 գործառնության օրագրում,

յե) կցել օրդերին պահպանման վկայականը, հանձնել նրանց՝ գանձապահին և ստացողին տալ համարային տալոն, օրդերում նշելով տալոնի համարը:

36. Յեթե պարտատոմսատերը պահատվությունից ստանում է վոչ բոլոր պարտատոմսերը, այլ միայն մի մասը, ապա վերահսկիչը պարտավոր է պահպանման վկայականում և անձնական հաշվում նշել տրվող պարտատոմսերի համարները, սերիաներն ու գումարը և դուրս բերել ի պահ մնացող պարտատոմսերի գումարը:

Պահատվությունից բոլոր պարտատոմսերը տալիս, պահպանման վկայականում և անձնական հաշվում պարտատոմսերի համարներն ու սերիաները չեն գրանցվում, նշվում է պարտատոմսերի գումարը, իսկ պահպանման վկայականն ու անձնական հաշիվը մարվում են «հաշիվը փակված է, դատան ստորագրությունը» մակագրությամբ:

Մարված անձնական հաշիվները վերահսկիչը պահում է առանձին արխիվային քարտակալում:

37. Յեթե վերահսկիչի մեջ կասկած է առաջանում պարտատոմսերը ստացողի անձնավորության մեջ, ապա վերահսկիչը պահանջում է անվանական պահպանման վկայականը ներկայացնողից ներկայացնելու անցագիրը կամ անցագիրը փոխարինող փաստաթուղթը:

38. Յեթե պարտատոմսերն ստանում է վոչ թե ինքը, նրանց տերը այլ նրա հավատարմատարը (հավատարմագրով) ապա վերահսկիչը անցագրով կամ անցագիրը փոխարինող փաստաթղթով պարտավոր է նույնպես համոզվել հավատարմագիրը ներկայացնողի անձնավորության մեջ և համեմատել հավատարմագրում յեղած պարտատոմսատիրոջ ստորագրությունը անձնական հաշվում յեղած նրա ստորագրության նմուշի հետ:

39. Պարտատոմսերը անգրագետին տալիս վերահսկիչը պարտավոր է պարտատոմսատիրոջ կողմից ներկայացվելիք անցագիրը համեմատել անձնական հաշվում առաջներում գրանցված անցագրի համարի հետ և պարտատոմսատիրոջ ստորագրության փոխարեն ձև № 58 օրդերում նշել անցագրի դատան ու համարը:

40. Ըստ ներկայացնողի ի պահ ընդունած պարտատոմսերը մասնակի կամ լրիվ տալու դեպքում պահպանման վկայականը անձնական հաշվի հետ համեմատելուց հետո պարտատոմսերը տրվում են պահպանման վկայականը ներկայացնող անձնավորությանը:

Ձև № 58 օրդերում պարտատոմսերը տալու մասին ստացողի ազգանունը ցույց չի տրվում:

Ներկայչական պահպանման վկայականով պարտատոմսերի մի մասը տալու դեպքում գործառնությունը ձևակերպվում է վորպես բոլոր պարտատոմսերի հանձնում տիրոջը և ընդունում նրանից համապատասխան պարտատոմսեր նոր պահպանման համար:

Պահպանման նոր վկայականում և անձնական հաշվի քարտում նշվում է պարտատոմսերը պահելու համար առաջներում գանձված վճարի գումարը և ժամկետը, վորի ժամանակվա համար այդ վճարը գանձված է: Բացի դրանից, անձնական հաշվի քարտում վերահսկիչը նշում է նախորդ պահպանման վկայականի համարն ու դատան: Մնացած պարտատոմսերի հետագա պահպանման համար վճարը

պարտատոմսատիրոջից գանձվում է այն ժամկետն անցնելուց հետո, մինչև վորը գանձված է յեղել վճարը պարտատոմսերը սկզբնական պահպանման ընդունելու ժամանակ։

41. Գանձապահը պարտատոմսերը պահատվությունից վերադարձնելիս պարտավոր է՝

ա) համեմատել պահպանման վկայականում յեղած գրանցումները ձև № 58 օրդերի տվյալների հետ և համոզվել պարտատոմսատիրոջ ստորագրության առկայության մեջ օրդերում՝ պարտատոմսերը ստանալու մասին։

բ) ձև № 86—բ վերգրի հակադիր յերեսում նշել տրվող պարտատոմսերի գումարը, համարներն ու սերիաները և դուրս բերել պարտատոմսերի մնացորդը։

գ) ստորագրել օրդերը և հաշվարկումը պահպանման վկայականում,

դ) ստանալ պարտատոմսատիրոջից պահպանման վճարը և տալ նրան պարտատոմսերը, հետ վերցնելով նրանից համարային տալոնը։

42. Յեթե անվանական պահպանման համար հանձնված պարտատոմսերի տերը ստանում է վոչ թե բոլոր պարտատոմսերը, այլ նրանց մի մասը, ապա գանձապահը պարտավոր է տալ այն համարների ու սերիաների պարտատոմսերը, վորոնք նշվել են պահպանման վկայականի հակադիր յերեսում, վերադարձնել նրան պահպանման վկայականը և ծրարում դուրս բերել պարտատոմսերի նոր մնացորդը։

Յեթե պարտատոմսերը տրվում են լրիվ, ապա մարված պահպանման վկայականը ձև № 86—բ վերգրի հետ միասին կցվում է ձև № 58 օրդերին, վորով պարտատոմսերը տրվել են։

43. Ներկայացված պահպանման վկայականով պարտատոմսերի մի մասը տալիս, գանձապահը պարտավոր է պարտատոմսերի հետ միասին ծրարում պահվող ձև № 86—բ վերգիրը հանել, մարել այն և կցել վերահսկիչից ստացած ձև № 58 օրդերին։

Ծրարում գանձապահը թողնում է այն պարտատոմսերը, վորոնք թվարկված են ձև № 86—բ (կամ ձև № 87) նոր վերգրում, իսկ մնացած պարտատոմսերը պահպանման նոր վկայականի հետ տալիս է ստացողին ու ծրարի վրա նշում է մնացած պարտատոմսերի գումարը։

44. Օրվա ընթացքում պահատվությունից տրված պարտատոմսերի ընդհանուր գումարը վերահսկիչը համաձայն ձև № 58 օրդերների գրանցում է ձև № 25—ա գործառնության օրագրում, ի պահ ընդունված պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված սյունյակներում «այլ յելք» (փոխառությունների համապատասխան) տողում։

Պահատվությունից պարտատոմսերը տալու գործառնությունները հաշվի յեն առնվում բացի այդ, ձև № 25—ա կցորդի 5 և 6 հատվածներում, «հաշիվների քանակը «սյունակում» նվազել է» տողում ցույց են տրվում միայն փակված հաշիվները, վորոնցով պարտատոմսերը պահատվությունից լրիվ տրվել են։

## 4. ՆՈՐ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏԱԼԸ ԿՈՐԱԾԻ ՓՈԽԱՐԵՆ

45. Անվանական պահպանման վկայականը կորցնելու մասին հայտարարությունը ստանալով, վերահսկիչը պարտավոր է՝

ա) հայտարարության վրա յեղած ստորագրությունը անձնական հաշվում յեղած ստորագրության նմուշի հետ համեմատելով, համոզվել այն բանում, վոր հայտարարություն տվող անձը հանդիսանում է իրոք պարտատոմսատերը։

բ) նախկին համարով դուրս գրել նոր պահպանման վկայական, նրա վրա մակագրելով՝ «տրված է կորածի փոխարեն, դատան ստորագրությունը»,

գ) անձնական հաշվի աջ վերին անկյունում մակագրել՝ «տրված է նոր պահպանման վկայական կորածի փոխարեն, դատան ստորագրությունը»,

դ) պարտատոմսատիրոջ հայտարարության վրա վերցնել ստորագրություն պահպանման նոր վկայականը ստանալու մասին,

յե) դուրս գրել ձև № 53 օրդերը պահպանման նոր վկայական տալու դիմաց գանձված վճարի համար և օրդերին կցել նախկին վկայականը կորցնելու մասին տրված հայտարարությունը։

զ) պահպանման վկայականն ու ձև № 53 օրդերը պարտատոմսատիրոջ հայտարարության հետ միասին հանձնել գանձապահին։

Ծանոթություն.— Ձև № 86—ա անձնական հաշիվների և ձև № 86—բ վերգրի բլանկները, վորոնք մնացել են չօգտագործված, կորածների փոխարեն պահպանման նոր վկայականը տալիս, վերահսկիչի կողմից կցվում են ձև № 78 օրդերին, վորով յելք են գրվում ծախսված արժեքավոր բլանկները։

46. Գանձապահը պարտավոր է՝

ա) պահպանման նոր վկայականում նշված պարտատոմսերի գումարը, համարներն ու սերիաները համեմատել ծրարում յեղած պարտատոմսերի գումարի, համարների ու սերիաների հետ,

բ) ծրարի ու ձև № 86—բ վերգրի վրա մակագրել՝ «տրված է պահպանման նոր վկայական, դատան ստորագրությունը»,

գ) ձև № 53 օրդերով պարտատոմսատիրոջից ստանալ պահպանման նոր վկայական տալու համար վճարը, ստորագրել նոր վկայականը և տալ այն պարտատոմսատիրոջը։

## 5. Ի ՊԱՀ ԳՏՆՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ

47. Ի պահ գտնված պարտատոմսերը կարող են ուղարկվել նրանց տիրոջ հասցեյով։ Պարտատոմսերի ուղարկումը կատարվում է նրանց տիրոջ գրավոր հայտարարության համաձայն, վորին կցվում է պահպանման վկայականը։

Պարտատոմս պահողն ինքն է հանձնում կամ ուղարկում հայտարարությունն ու պահպանման վկայականը այն խնայողական դրամարկղին, վորտեղ պարտատոմսերը պահվում են։

Պարտատոմսերի ուղարկումը նրանց տերերի հասցեյով կատարվում է արժեքավոր ծրարով և ապահովագրվում է պարտատոմսերի անվանական արժեքի գումարով ու պարտատոմսերի վրա ընկած շահումների գումարով և փոստի հետադարձ ստացականով։ Պարտատոմսերն ուղարկվում են վերադիր վճարով՝ նրանց ուղարկելու փոստային ծախսերի ու նրանց պահպանման համար հասանելիք վճարի գումարի չափով։

48. Պարտատոմսերն ուղարկելու մասին հայտարարությունը ստանալով, վերահսկիչը պարտավոր է՝

ա) համոզվել հայտարարությանը կցվող պահպանման վկայականի առկայության մեջ և անձնական հաշվում յեղած ստորագրության նմուշի համեմատել հայտարարության միջի ստորագրության հետ։

բ) ստուգել պարտատոմսերը շահումների խաղարկությունների աղյուսակներով՝ ապահովագրական վճարը վորոշելու համար.

գ) կազմել ձև № 58 օրդերը, ուղարկվող պարտատոմսերի անվանական արժեքի չափով. (օրդերի գումարը ցույց է տրվում ձև № 25—ա կցորդում, այն սյունյակներում, վորոնք նախատեսված են ի պահ ընդունված պարտատոմսերի հաշվառ-

ման համար «ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկների և հաճախորդների հասցեներով» տողում),

դ) կազմել ձև № 54 օրդերը գանձապահին (ինկասատորին) փոստային ծախքերի համար (ներառյալ ապահովագրական տուրքը) դրամ տալու համար,

